

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ  
ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը**

1. Սույն օրենքը կանոնակարգում է ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կազմակերպահրավական հիմքերը, սահմանում է ընտանեկան բռնության հասկացությունը, տեսակները, ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում իրավասու մարմինների գործունեության ուղղությունները, ընտանեկան բռնությունից տուժողների պաշտպանության միջոցների տեսակները, դրանց կիրառման հիմքերը, ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները, ընտանեկան բռնության ենթարկվածների վերաբերյալ տեղեկատվության իրավական պաշտպանության առանձնահատկությունները:

2. Սույն օրենքը նպատակ է հետապնդում՝

1) համակարգել ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի, ուղղությամբ պատասխանատու մարմինների գործունեությունը.

2) ստեղծել ընտանեկան բռնության ենթարկվածներին հոգեբանական և նյութական աջակցություն տրամադրելու և նրանց սոցիալական վերականգնման համար պատասխանատու մարմինների համակարգ.

3) ձևավորել ընտանեկան բռնության ենթարկվածների անվտանգության և պաշտպանության, նրանց իրավունքների և օրինական շահերի, այդ թվում՝ արդարադատության մատչելիության ապահովման համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր:

## **Հոդված 2. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին օրենսդրությունը**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, այլ օրենքներով ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

## **Հոդված 3. Ընտանեկան բռնությունը և դրա տեսակները**

1. Ընտանեկան բռնությունը ֆիզիկական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառումն է ընտանիքի ներսում կամ ընտանեկան միջավայրում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ նախկինում կամ ներկայում փաստական ամուսնական հարաբերություններ մեջ գտնվող կամ գտնված անձանց միջև, անկախ նրանից, թե արդյոք բռնարարը բնակվում է կամ բնակվել է բռնության ենթարկվածի հետ նույն բնակարանում:

2. Ընտանեկան բռնության տեսակներն են՝

1) ֆիզիկական բռնություն՝ ծեծը, կամ ցանկացած եղանակով դիտավորությամբ ֆիզիկական ցավ կամ ֆիզիկական ուժեղ տառապանք պատճառելը, կամ ցանկացած եղանակով առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելը, ինչպես նաև ազատությունից ապօրինի զրկելը.

2) հոգեբանական բռնություն՝ ցանկացած եղանակով դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու սպառնալիքը, հետամտումը, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացում, ինչպես նաև երեխայի ներկայությամբ ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ցանկացած բռնություն գործադրելը, որը երեխային հոգեկան տառապանք է պատճառել.

ա. հետամտում՝ դիտավորությամբ շարունակաբար սպառնալից գործողություններ կատարելը, որոնք անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար.

բ. սոցիալական ծայրահեղ մեկուսացում՝ այլ անձանց հետ ինքնուրույն հարաբերություններ կառուցելու և սոցիալական կյանքին մասնակցելու հնարավորությունից զրկում.

3) տնտեսական բռնություն՝ դիտավորությամբ բնակության վայրից, սննդից, հագուստից, կամ այլ միջոցներից զրկելը, որոնց նկատմամբ անձն ունի օրենքով սահմանված՝ տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունք, կամ դրանց օգտագործումն ապօրինաբար վերահսկելը, ինչպես նաև չափահաս և գործունակ անձին աշխատելը և գումար վաստակելն արգելելը:

#### **Հոդված 4. Օրենքի հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ապաստարան՝ ընտանեկան բռնության ենթարկվածների և (կամ) նրանց խնամքի տակ գտնվող անձանց տրամադրվող անվտանգ ժամանակավոր կացարան, որտեղ նրանց տրամադրվում են «Սոցիալական աջակցության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ.

2) ենթադրյալ բռնարար՝ անձ ում վերաբերյալ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններ ներկայացվել է ընտանեկան բռնության կատարման մասին հաղորդում կամ տեղեկություն.

4) բռնարար՝ անձ, ում վերաբերյալ ընդունվել է անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում.

5) ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկված անձ՝ անձ ում վերաբերյալ կայացվել է ընտանեկան բռնության ենթարկվածի նախնական նույնացման մասին եզրակացություն կամ ում նկատմամբ առկա է ընտանեկան բռնության անմիջականորեն սպառնացող վտանգ.

6) ընտանեկան բռնության ենթարկված անձ՝ անձ, ով, ըստ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշման, տուժել է բռնարարի կողմից գործադրված ընտանեկան բռնությունից.

7) ընտանեկան բռնության անմիջականորեն սպառնացող վտանգ՝ հիմնավոր ենթադրություն, որ առկա է սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման բարձր հավանականություն.

8) խնամքի տակ գտնվող անձ՝ երեխա, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձ, որը բնակվում է ընտանեկան բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձի հետ և որին վերջինս մշտապես հոգ է տանում.

9) ընտանեկան բռնության ենթարկվածի նախնական նույնացման մասին եզրակացություն՝ Աջակցության կենտրոնի, ոստիկանության կամ բժշկական հաստատության, իսկ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում՝ նաև նույն օրենքով

նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրվող՝ առերևույթ ընտանեկան բռնության ենթարկված լինելու մասին փաստաթուղթ, որը նախնական նույնացված անձին հնարավորություն է տալիս օգտվել սույն օրենքով նախատեսված՝ ապաստարանի և Աջակցության կենտրոնի կողմից տրամադրվող ծառայություններից, ինչպես նաև անվճար իրավաբանական և առաջնային բժշկական օգնությունից:

10) ընտանեկան բռնության ենթարկվածի նույնացում՝ անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումները համարվում են ընտանեկան բռնության ենթարկվածի նույնացում՝ սույն օրենքի իմաստով: Նույնացված անձը հնարավորություն ունի օգտվելու սույն օրենքով նախատեսված՝ ապաստարանի և Աջակցության կենտրոնի կողմից տրամադրվող ծառայություններից, անվճար իրավաբանական և առաջնային բժշկական օգնությունից, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հատուկ հաշվեհամարից:

**ԳԼՈՒԽ 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՐՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ և ԴՐԱ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

**Հոդված 5. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործառույթներ իրականացնող մարմինները**

1. Ընտանեկան բռնության կանխարգելումը և դրա դեմ պայքարն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են՝

1) Ընտանեկան բռնության կանխարգելման խորհուրդը, որը համակարգում է ընտանեկան բռնության կանխարգելման աշխատանքները.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ սույն օրենքով Լիազոր մարմին).

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն).

4) կրթության և գիտության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը.

5) առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը.

6) խնամակալության և հոգաբարձության մարմինները.

8) ընտանեկան բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները՝

ա. Աջակցության կենտրոնները.

բ. ընտանեկան բռնության ենթարկվածների համար ապաստարանները (այսուհետ՝ ապաստարան):

2. Հանրապետական գործադիր մարմինները և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանեկան բռնության կանխարգելմանը, դրա դեմ պայքարին, և այդ համատեքստում համագործակցում են սույն օրենքով Լիազոր մարմնի հետ: Նշված մարմինները նաև մասնակցում են ընտանեկան բռնության ենթարկվածներին և նրանց ընտանիքի անդամներին հոգեբանական և նյութական աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների իրականացմանը:

## **Հոդված 6. Ընտանեկան բռնության կանխարգելման խորհրդի գործունեության ուղղությունները**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման խորհրդի գործունեության ուղղություններն են՝

1) սերտորեն համագործակցելով քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ՝ հետևել սույն օրենքով սահմանված դրույթների ապահովմանը.

2) քննարկել և մշակել ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում պետական միասնական քաղաքականության վերաբերյալ առաջարկներ և համակարգել նշված բնագավառում ռազմավարական և մարտավարական ծրագրերի իրականացումը.

3) քննարկել ընտանեկան բռնության կանխարգելմանն առնչվող առանձին հարցեր, հրատապ խնդիրներ և մշակել համապատասխան առաջարկություններ.

4) ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև համագործակցությունը՝ ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում.

5) իրականացնել ընտանեկան բռնության վերաբերյալ ուսումնասիրություններ, ընտանեկան բռնության վերաբերյալ հանրությանը իրազեկելու միջոցառումներ, ուսումնասիրել տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա մշակել առաջարկներ.

6) մշակել ընտանեկան բռնության ենթարկվածների և բռնարարների սոցիալական վերականգնման ծրագիր.

7) քննարկել և գնահատել հանրապետական գործադիր մարմինների կողմից ընտանեկան բռնության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին ուղղված պետական ծրագրերի մասին ամփոփ հաշվետվությունները, անհրաժեշտության դեպքում առաջարկում է ներկայացնել թեմատիկ զեկույցներ առանձին խնդիրների վերաբերյալ.

8) ընտանեկան բռնության դեմ պայքարի բնագավառում իրականացնել օրենքով և իր աշխատակարգով նախատեսված այլ գործառույթներ:

2. Ընտանեկան բռնության կանխարգելման խորհուրդը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, որով նաև հաստատվում են Խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը: Խորհրդի կազմում հավասար թվով ընդգրկվում են՝

1) հանրապետական գործադիր իշխանության և իրավապահ մարմինների ներկայացուցիչներ.

2) հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.

3) Աջակցության կենտրոնների և ապաստարանների ներկայացուցիչներ՝ սույն օրենքով Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

3. Խորհուրդը նախագահ է ընտրում իր կազմում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ 3 տարի ժակետով առանց վերընտրման իրավունքի:

**Հոդված 7. Սույն օրենքով Լիազոր մարմնի գործունեության ուղղություններն ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում**



1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում սույն օրենքով Լիազոր մարմինը՝

1) մասնակցում է ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացմանը.

2) իրականացնում է ընտանեկան բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում և դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան.

3) ուսումնասիրում է ընտանեկան բռնության պատճառները և պայմանները, մշակում և Կանխարգելման խորհրդին ներկայացնում դրանց հաղթահարմանն ուղղված ծրագրեր.

4) սահմանում է ապաստարանին ներկայացվող նվազագույն պահանջները և վերահսկում ապաստարանների կողմից դրանց պահպանումը, ինչպես նաև իրականացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կողմից ընտանեկան բռնության ենթարկվածներին ապաստարանի միջոցով սոցիալական ծառայություններ տրամադրելու հավաստագրում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

5) հիմնադրում է ապաստարաններ, հասարակական կազմակերպությունների հետ կնքում է ապաստարանի ֆինանսավորման պայմանագիր և հսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ՝ այդ թվում ֆինանսական միջոցների օգտագործման մասով.

6) Ոստիկանությանը և խնամակալության և հոգաբարձության մարմիններին տեղեկացնում է անչափահասի նկատմամբ գործադրված ընտանեկան բռնության կամ դրա իրական սպառնալիքի մասին.

7) պարբերաբար կազմակերպում է ապաստարանների և Աջակցության կենտրոնների աշխատակիցների վերապատրաստում, այդ թվում՝ ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

8) հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ ընտանեկան բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ Գիծ» ծառայության հեռախոսահամարները), որոնց միջոցով ընտանեկան բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել Աջակցության կենտրոնների աշխատակցի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց օգնություն.

9) հաստատում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները և ուղղորդման կարգը.

10) բացում է ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամար և ապահովում դրա գործունեությունը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

## **Հոդված 8. Ոստիկանության գործունեության ուղղություններն ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում Ոստիկանությունը՝

1) ստեղծում է ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում հատուկ ստորաբաժանում:

2) պրոֆիլակտիկ հաշվառման է վերցնում այն անձանց, ովքեր հակված են ընտանեկան բռնություն կատարելուն, և պարբերական այցելություններ կատարում այն ընտանիքներ, որոնց անդամները վերցված են պրոֆիլակտիկ հաշվառման:

3) ընտանեկան բռնության ենթարկվածներին և ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածներին պարզաբանում է նրանց իրավունքները և հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունը, անհրաժեշտության դեպքում նրանց ուղղորդում է ապաստարաններ կամ աջակցության կենտրոններ, ինչպես նաև ապահովում է նրանց պաշտպանությունը՝ սույն օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

4) կազմակերպում է իր աշխատակիցների՝ ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ պարբերական վերապատրաստումներ, ինչպես նաև մասնակցում է այլ մարմինների և կազմակերպությունների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին:

5) կայացնում է սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված՝ անհետաձգելի միջամտության որոշումներ, ապահովում է դրանց դատական հաստատման համար դատարան դիմում ներկայացնելը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև հսկողություն է իրականացնում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ:

6) մշակում է սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները և կազմակերպում է ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում

հատուկ ստորաբաժանման բոլոր ծառայողների պարտադիր վերապատրաստումները՝ հիշյալ չափորոշիչներին ծանոթացնելու նպատակով.

7) տրամադրում է ընտանեկան բռնության ենթարկվածի նախնական նույնացման մասին եզրակացություն.

7) համագործակցում է սույն օրենքով Լիազոր մարմնի և Աջակցության կենտրոնների հետ՝ այդ թվում վիճակագրություն, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրելու և ընտանեկան բռնության ենթարկվածներին ուղղորդելու հարցերում.

8) իրականացնում է այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված գործառույթներ:

**Հոդված 9. Կրթության և գիտության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմնի գործունեության ուղղություններն ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում Կրթության և գիտության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը՝

1) ուսումնադաստիարակչական հաստատություններում իրականացնում է ընտանեկան բռնության և դրա կանխարգելման վերաբերյալ իրազեկման միջոցառումներ.

2) ուսուցիչների և դաստիարակների հետ պարբերաբար անցկացնում է ընտանեկան բռնության կանխարգելման, և ընտանեկան բռնության դեպքերի

մասին իրավասու մարմիններին հայտնելու կարգի վերաբերյալ վերապատրաստումներ.

3) համագործակցում է սույն օրենքով Լիազոր մարմնի հետ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության տրամադրման գործընթացում.

4) ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի շրջանակներում իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

### **Հոդված 10. Առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմնի գործունեության ուղղություններն ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինը՝

1) սահմանում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց անվճար բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման կարգը.

2) սահմանում է բժշկական օգնության դիմած ընտանեկան բռնության ենթարկված անձանց վերաբերյալ տեղեկության գրանցման և իրավապահ մարմիններին հաղորդելու կարգը.

3) իրականացնում է ընտանեկան բռնության դեպքերի մասին իրավասու մարմիններին հայտնելու հիմքերի և կարգի վերաբերյալ բժշկական հանրությանն իրազեկելու միջոցառումներ.

4) բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ է իրականացնում բժշկական օգնության դիմաժ' ընտանեկան բռնության ենթարկված անձանց հասանելի հոգեբանական և խորհրդատվական ծառայությունների մասին տեղեկացնելու, նրանց Աջակցության կենտրոններ ուղղորդելու կարգի վերաբերյալ.

5) համագործակցում է սույն օրենքով Լիազոր մարմնի հետ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության տրամադրման գործընթացում.

6) ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

**Հոդված 11. Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության ուղղություններն ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի բնագավառում**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի նպատակով Խնամակալության և հոգաբարձության մարմինները իրենց լիազորությունների շրջանակներում՝

1) օրենքով նախատեսված դեպքերում դիմում են դատարան՝ պաշտպանական որոշման համար, ինչպես նաև հաղորդում են ներկայացնում իրավապահ մարմիններին՝ անչափահաս և դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց նկատմամբ գործադրվող ընտանեկան բռնության կամ դրա իրական սպառնալիքի մասին.

2) օրենքով սահմանված կարգով իրավասու մարմիններում, այդ թվում՝ դատարանում իրականացնում են ընտանեկան բռնության ենթարկված կամ դրա իրական սպառնալիքի ներքո գտնվող անչափահասների, դատական կարգով

անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը.

3) համագործակցում է սույն օրենքով Լիազոր մարմնի հետ ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության տրամադրման գործընթացում.

4) ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանության նպատակով իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

## **Հոդված 12. Աջակցության կենտրոնը**

1. Աջակցության կենտրոնը «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություն է:

2. Աջակցության կենտրոնը՝

1) կազմակերպում է ընտանեկան բռնության ենթարկվածների և ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածների ընդունելություն՝ տրամադրելով նրանց անհրաժեշտ և անհատույց հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն, օգնություն և (կամ) սոցիալական աջակցություն.

2) անհրաժեշտության դեպքում ընտանեկան բռնության ենթարկվածներին՝ նրանց երեխաների և (կամ) նրանց խնամքի տակ գտնվող անձանց հետ միասին, վերջիններիս համաձայնությամբ ուղղորդում է ապաստարան.

3) ընտանեկան բռնության ենթարկվածներին իրենց համար հասկանալի լեզվով տեղեկացնում է իրենց իրավունքների, հասանելի ծառայությունների և

օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների և դրանցից օգտվելու կարգի մասին.

4) ուսումնասիրում է ընտանեկան բռնության պատճառներն ու պայմանները վարում ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրություն և դրանք ներկայացնում սույն օրենքով Լիազոր մարմին.

5) վերհանում է ընտանեկան բռնության սպառնալիքի ներքո գտնվող ընտանիքներին և նրանց ցուցաբերում անհրաժեշտ աջակցություն, այդ թվում՝ ընտանեկան բռնության ենթարկվածին և բռնարարին հոգեբանական խորհրդատվությամբ ապահովելու, նրանց իրենց իրավունքները և պարտականությունները պարզաբանելու և այլ միջոցներով.

6) պաշտոնական նախազգուշացման մասին որոշման պատճեն ստանալու հետո առաջարկում է ենթադրյալ բռնարարին և ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածներին հոգեբանական աջակցության տրամադրում.

7) իրականացնում է ընտանեկան բռնության ենթարկվածի նախնական նույնացում.

8) ընտանեկան բռնության ենթարկվածներին իր հնարավորության սահմաններում աջակցում է աշխատանքի ընդունվելու և պետությունից կամ համապատասխան կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում.

9) անհրաժեշտության դեպքում դիմում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանում՝ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու համար, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկվածի համաձայնությամբ դիմում է դատարան՝ պաշտպանական որոշում կայացնելու դիմումով.



10) ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանությունն ապահովելու նպատակով իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

### **Հոդված 13. Ապաստարանը**

1. Ապաստարանը հիմնադրվում է սույն օրենքով Լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ ֆիզիկական կամ ոչ առևտրային իրավաբանական անձանց, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների կողմից:

2. Սույն օրենքով Լիազոր մարմինը հասարակական կազմակերպությունների կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ կարող է կնքել որոշակի տարածքում նրանց կողմից ապաստարան հիմնադրելու կամ արդեն հիմնադրված ապաստարանի գործունեության աջակցության մասին պայմանագիր, որը պետք է պարունակի նաև այդ ապաստարանի գործունեության նկատմամբ սույն օրենքով Լիազոր մարմնի կողմից հսկողություն իրականացնելու կարգը, այդ թվում՝ տրամադրված ֆինանսական միջոցների օգտագործման նկատմամբ: Նոր ապաստարանի հիմնադրման վայրը որոշում է սույն օրենքով Լիազորված մարմինը՝ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից տրամադրվող կարիքների գնահատման եզրակացությունների հիման վրա: Ֆինանսավորվող հասարակական կազմակերպությունը կամ տեղական ինքնակառավարման մարմինն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվող մրցույթով:

3. Ապաստարան հիմնադրելու համար համապատասխան կազմակերպությունները պետք է ստանան սույն օրենքով Լիազոր մարմնի կողմից

տրամադրվող հավաստագրում, որի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է օրենքով սահմանված կարգով աջակցություն տրամադրել տեղական ինքնակառավարման մարմին, ֆիզիկական կամ ոչ առևտրային իրավաբանական անձանց՝ ապաստարան ստեղծելու և վերջինիս գործունեությունն ապահովելու համար:

4. Ապաստարանը պետք է ապահովված լինի անհրաժեշտ կենցաղային, իսկ երեխաների համար՝ նաև խնամքի և ուսման պայմաններով:

5. Ապաստարանը՝

1) ընտանեկան բռնության ենթարկվածներին, ինչպես նաև նրանց խնամքի տակ գտնվող անձանց՝ (այսուհետ սույն հոդվածի իմաստով՝ շահառուներ) իրենց ցանկությամբ անհատույց կերպով հատկացնում է ապահով բնակելի տարածք՝ համալրված համապատասխան անվտանգության համակարգով.

2) շահառուներին տրամադրում է անհատույց հոգեբանական, իրավաբանական խորհրդատվություն և օգնություն, բժշկական և սոցիալական աջակցություն՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան մասնագետների, ինչպես նաև ապահովում է սննդով և հագուստով, իսկ երեխաներին՝ նաև ուսման հնարավորություններով.

3) անհրաժեշտության դեպքում շահառուներին՝ նրանց համաձայնությամբ, ուղարկում է ըստ նշանակության՝ համապատասխան բժշկական հետազոտություն անցնելու, բուժօգնություն ստանալու, վերականգնվելու կամ այլ օգնություն ստանալու համար.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տրամադրում է տեղեկություն սույն օրենքով Լիազորված մարմին և իրավապահ մարմիններին:

6. Ապաստարանում կարող են տեղավորվել միայն այն անձինք և նրանց խնամքի տակ գտնվողները, ում նկատմամբ օրենքով սահմանված կարգով կայացվել է ընտանեկան բռնության ենթարկվածի նախնական նույնացման մասին եզրակացություն.

7. Շահառուները ապաստարանում տեղավորվում են ոչ ավելի, քան 6 ամսով: Ապաստարանում գտնվելու ժամկետը որոշվում է շահառուներին համապատասխան օգնություն ցույց տվող մասնագետների կողմից՝ հաշվի առնելով նրանց ցանկությունը, նրանց անվտանգության համար սպառնալիքների առկայությունը կամ բացակայությունը, նրանց՝ ինքնուրույն կամ այլ անձի հետ համատեղ բնակվելու հնարավորությունը և այլ վերաբերելի հանգամանքներ:

8. Ապաստարանի գործառույթները, դրա տրամադրման կարգը և պայմանները, ինչպես նաև ապաստարանում համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ սույն օրենքի, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ոլորտը կարգավորող այլ օրենքների հիման վրա:

#### **Հոդված 14. Ընտանեկան բռնությունը կանխարգելող մարմինների ֆինանսավորման աղբյուրները**

1. Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի աշխատանքներին ներգրավված մարմինները, որոնք ընդգրկված են պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքում կամ համակարգում, նշված գործունեության մասով ֆինանսավորվում են համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջեի միջոցների, հաշվին:

2. Պետական մարմինների, Ֆիզիկական կամ ոչ առևտրային իրավաբանական անձանց կողմից ստեղծվող խորհրդատվական կենտրոնների և ապաստարանների ֆինանսավորումն իրականացվում է վերջիններիս միջոցների, ինչպես նաև օրենքով չարգելված՝ ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

### **ԳԼՈՒԽ 3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

**Հոդված 15. Ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանության միջոցների տեսակները.**

1. Ընտանեկան բռնության ենթարկվածների պաշտպանության միջոցներն են՝
  - 1) պաշտոնական նախազգուշացումը.
  - 2) անհետաձգելի միջամտության որոշումը.
  - 3) պաշտպանական որոշումը:

#### **Հոդված 16. Պաշտոնական նախազգուշացում**

1. Ընտանեկան բռնությունից պաշտպանություն իրականացնելու կամ դրա կանխարգելման նպատակով ոստիկանության ծառայողի կողմից ենթադրյալ բռնարարի հանդեպ կարող է կիրառվել բռնության կիրառման անթույլատրելիության մասին պաշտոնական նախազգուշացում, որը ենթադրում է նաև բռնության գործադրման դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների մասին տեղեկացում:

2. Պաշտոնական նախազգուշացումը կիրառվում է այն դեպքերում, երբ ընտանեկան բռնություն առերևույթ գործադրելու մասին հաղորդում է ստացվել առաջին անգամ, կատարված արարքը հանցակազմի հատկանիշներ չի

պարունակում, և ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ չի սպառնում:

3. Պաշտոնական նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության ծառայողի կողմից կայացված պատճառաբանված որոշումը ենթադրյալ բռնարարին հանձնվում է առձեռն, իսկ դեպքի վայրում նրա բացակայության դեպքում՝ պատվիրված նամակով նրան է ուղարկվում փոստով:

4. Պաշտոնական նախազգուշացում կիրառելու մասին ոստիկանության ծառայողի կողմից կայացված պատճառաբանված որոշման պատճեն այն կայացրած ոստիկանության ծառայողն ուղարկում է ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածի մշտական բնակության վայրի Աջակցության կենտրոն:

### **Հոդված 17. Անհետաձգելի միջամտության որոշումը**

1. Ընտանեկան բռնության ենթարկվածին անմիջականորեն սպառնացող վտանգի առկայության դեպքում նրա անվտանգության անհապաղ ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողի կողմից ենթադրյալ բռնարարի հանդեպ կարող է կիրառվել անհետաձգելի միջամտության որոշում:

2. Անհետաձգելի միջամտության որոշման գործողության ժամկետը չի կարող գերազանցել քսան օրը: Որոշումը կայացնելուց հետո 48 ժամվա ընթացքում այն ենթակա է դատական հաստատման:

3. Անհետաձգելի միջամտության որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները՝

1) հարկադրել բռնարարին՝ անմիջապես հեռանալ ընտանեկան բռնության ենթարկվածի բնակության տարածքից՝ մինչ որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը, բայց ոչ ավելի, քան տասը օրով.

2) արգելել բռնարարին՝ այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանեկան բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրերում:

3) արգելել բռնարարին՝ 100 մետրից ավելի մոտենալ իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանեկան բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց:

4) արգելել պահել կամ կրել զենք:

5) բռնարարի վրա պարտականություն դնել՝ ընտանեկան բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս երեխաներին պահելու ծախսերը:

6) սահմանել բռնարարի՝ երեխաների հետ տեսակցության ժամանակավոր ռեժիմ կամ անհրաժեշտության դեպքում արգելել տեսակցությունները:

7) արգելել բռնարարին՝ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանեկան բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց հետ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ:

5. Եթե ընտանեկան բռնության ենթարկվածն անչափահաս է և անհետաձգելի միջամտության որոշումը կիրառվում է նրա հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, որոշումը կայացրած ոստիկանության ծառայողն այդ որոշման պատճեն և համապատասխան արձանագրությունն անհապաղ ուղարկում է խնամակալության և հոգաբարձության մարմնին: Երեխաների ժամանակավոր խնամքը կազմակերպվում է որոշման պատճեն

ստանալուց 24 ժամվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով սահմանված կարգով՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահով:

6. Անհետաձգելի միջամտության որոշում կիրառելու մասին ոստիկանության ծառայողի կողմից կայացված պատճառաբանված որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից: Դրա պատճեն բռնարարին հանձնվում է առձեռն, իսկ դեպքի վայրում բռնարարի բացակայության դեպքում՝ պատվիրված նամակով նրան է ուղարկվում փոստով: Բռնարարը նաև տեղեկացվում է անհետաձգելի միջամտության որոշման դատական հաստատման նիստին մասնակցելու իր իրավունքի մասին:

7. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված սահմանափակումը կիրառելիս անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության ծառայողը չի հեռանում մինչև բռնարարի կողմից իր իրերը հավաքելը և ընտանեկան բռնության ենթարկվածի բնակության վայրը լքելը:

8. Անհետաձգելի միջամտության որոշում կայացնող ոստիկանության ծառայողը որոշման պատճեն և համապատասխան արձանագրությունն անհապաղ ներկայացնում է իր ստորաբաժանման ղեկավարին, ով նշված փաստաթղթերը ստանալուց 24 ժամվա ընթացքում դիմում է դատարան՝ անհետաձգելի միջամտության որոշումը հաստատելու դիմումով: Դատարան դիմելու և դատարանի կողմից դիմումը քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող որոշումները և դրանց բողոքարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով:

9. Անհետաձգելի միջամտության որոշումը վերացվում է այն կայացրած ոստիկանության ծառայողի վերադասի կողմից՝ դրա հիմքերի վերացման կամ դրա կատարմանն ընտանեկան բռնության ենթարկվածի կողմից պարբերաբար խոչընդոտելու դեպքերում:

10. Անհետաձգելի միջամտության որոշումը բռնարարի կողմից կատարելու նկատմամբ հսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումները՝ ըստ իրենց գործունեության ուղղությունների: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն ապահովում է սույն հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված պարտականության կատարումը:

11. Անհետաձգելի միջամտության որոշման պահանջները բռնարարի կողմից չկատարելն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

### **Հոդված 18. Պաշտպանական որոշումը**

1. Պաշտպանական որոշման համար դատարան կարող են դիմել ընտանեկան բռնության ենթարկված կամ ենթադրաբար ենթարկված անձը, նրա ընտանիքի անդամները, կամ նրա համաձայնությամբ՝ նրան իրավաբանական օգնություն ցուցաբերողները կամ Աջակցության կենտրոնը՝ սեփական կամ պաշտպանության ենթակա անձին բժշկական կամ հոգեբանական օգնություն ցուցաբերողների նախաձեռնությամբ: Անչափահաս ընտանեկան բռնության ենթարկվածի դեպքում պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը:

2. Անհետաձգելի միջամտության որոշման՝ ուժի մեջ լինելը չի բացառում պաշտպանական որոշման համար դիմելու հնարավորությունը:

3. Դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին դիմումը քննում է՝ այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում: Պաշտպանական որոշումը տրվում է



ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածի և (կամ) նրա խնամքի տակ գտնվող անձանց պաշտպանելու և ընտանեկան բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:

4. Պաշտպանական որոշումը տրվում է մինչև 6 ամիս ժամկետով և կարող է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերի առկայությամբ դատարանի պատճառաբանված որոշմամբ 1 անգամ երկարաձգվել՝ առավելագույնը մինչև 3 ամիս ժամկետով:

5. Պաշտպանական որոշմամբ կարող են կիրառվել հետևյալ սահմանափակումները՝

1) հարկադրել բռնարարին՝ անմիջապես հեռանալ ընտանեկան բռնության ենթարկվածի բնակության տարածքից՝ մինչ որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը: Այս սահմանափակումը կարող է կիրառվել ոչ ավելի, քան տասնօրյա ժամկետով, եթե բռնարարի նկատմամբ միևնույն սահմանափակումը կիրառվել է նաև անհետաձգելի միջամտության որոշմամբ, և ոչ ավելի, քան քսանօրյա ժամկետով, եթե կիրառվում է առաջին անգամ: Պաշտպանական որոշման ժամկետը երկարեցնելու դեպքում բռնարարի նկատմամբ քննարկվող սահմանափակումը կարող է կիրառվել միայն, եթե դրա ժամկետն ընդհանուր առմամբ չի գերազանցի քսանօրյա ժամկետը:

2) արգելել բռնարարին՝ այցելել իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանեկան բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց՝ նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակվելու կամ այլ վայրերում:

3) արգելել բռնարարին՝ 100 մետրից ավելի մոտենալ իր հետ համատեղ բնակելի տարածքում չբնակվող ընտանեկան բռնության ենթարկվածին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց:

4) արգելել պահել կամ կրել զենք.

5) բռնարարի վրա պարտականություն դնել՝ ընտանեկան բռնության ենթարկվածի հետ կիսելու իրենց համատեղ անչափահաս երեխաներին պահելու ծախսերը.

6) սահմանել բռնարարի՝ երեխաների հետ տեսակցության ժամանակավոր ռեժիմ կամ անհրաժեշտության դեպքում արգելել տեսակցությունները.

7) արգելել բռնարարին՝ հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել ընտանեկան բռնության ենթարկվածի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև նրա խնամքի տակ գտնվող անձանց հետ:

8) բռնարարի վրա պարտականություն դնել անցնել բուժման կուրս ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, խաղամոլությունից, կամ ստանալ հոգեբանական աջակցություն.

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված սահմանափակումները կարող են կիրառվել առանձին կամ համակցության մեջ:

7. Պաշտպանական որոշման դիմումին ներկայացվող պահանջները, այն քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող որոշումները, դրանց դադարման հիմքերը և դրանք բողոքարկելու կարգը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Ընտանեկան բռնության ենթարկվածի դատական ներկայացուցչության հանրային պաշտպան տրամադրելու հիմքերը և կարգը նախատեսվում է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

8. Եթե ընտանեկան բռնության ենթարկվածը 18 տարին չլրացած երեխա է, և պաշտպանական որոշումը կիրառվում է նրա հետ համատեղ բնակվող միակ օրինական ներկայացուցչի նկատմամբ, դատարանը խնամակալության և

հոգաբարձության մարմնի միջոցով լուծում է երեխայի ժամանակավոր խնամքի հարցը՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքին համապատասխան՝ առաջնորդվելով երեխայի լավագույն շահով:

9. Պաշտպանական որոշումը բռնարարի կողմից կատարելու նկատմամբ հսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան ստորաբաժանումները՝ ըստ իրենց գործունեության ուղղությունների: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն ապահովում է սույն հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետով նախատեսված պարտականության կատարումը, իսկ սույն օրենքով Լիազոր մարմինը հետևում է նույն մասի 8-րդ կետով նախատեսված պարտականության կատարմանը:

10. Պաշտպանական որոշման պահանջները բռնարարի կողմից չկատարելն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

### **Հոդված 19. Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողության դադարումը՝ կապված քրեական գործի հարուցման հետ**

1. Ընտանեկան բռնության փաստով հարուցված քրեական գործի շրջանակում պաշտպանության միջոցներ կիրառվելու կամ կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու դեպքերում անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների գործողությունը դադարում է:

2. Ընտանեկան բռնության փաստով քրեական գործ հարուցվելուց հետո անհետաձգելի միջամտության որոշում կարող է կայացվել և պաշտպանական որոշման համար դիմում կարող է ներկայացվել, եթե ենթադրաբար ընտանեկան

բռնության ենթարկվածի նկատմամբ չեն կիրառվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներ կամ ենթադրյալ բռնարարի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց չի ընտրվել:

### **Հոդված 20. Ընտանեկան բռնություն կատարած անձին պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը**

1. Ենթադրյալ բռնարարը կամ բռնարարը, ում հանդեպ կիրառվել է ընտանեկան բռնության անթույլատրելիության վերաբերյալ պաշտոնական նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ոստիկանության կողմից վերցվում է պրոֆիլակտիկ (ընթացիկ) հաշվառման:

2. Ընտանեկան բռնություն կատարած անձը հանվում է պրոֆիլակտիկ հաշվառումից, եթե ընտանեկան բռնության վերջին արարքից հետո մեկ տարվա ընթացքում այն չի կրկնվել և նա ստացել է հոգեբանական աջակցություն:

3. Սույն հոդվածով նախատեսված՝ պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու կարգը հաստատում է Ոստիկանության պետը:

### **Հոդված 21. Անչափահաս անձի նկատմամբ պաշտպանության միջոցներ չկիրառելը**

Անչափահասի նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշում կամ պաշտպանական որոշում չի կիրառվում:

**ԳԼՈՒԽ 4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԸ ԵՎ ԴՐԱ  
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**Հոդված 22. Անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը**

1. Իրավասու մարմիններն ընտանեկան բռնության դեպքերի և(կամ) ընտանեկան բռնության ենթարկվածներին կամ ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածներին առնչվող հանցագործության դեպքերի վերաբերյալ անձնական կյանքի տվյալները ստանում են ինքնուրույն իրականացրած աշխատանքների արդյունքում, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, միջազգային, հասարակական կազմակերպություններից, զանգվածային լրատվության միջոցներից, ֆիզիկական անձանցից հնարավոր ցանկացած եղանակով՝ գրավոր, էլեկտրոնային նամակագրության, «թեժ գծերի» միջոցով և այլն:

2. Արգելվում է առանց ընտանեկան բռնության ենթարկվածի կամ ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածի համաձայնության զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ եղանակով նրանց վերաբերյալ այնպիսի տեղեկության հրապարակումը, որը թույլ կտա բացահայտել նրանց ինքնությունը, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3. Արգելվում է հրապարակել, այդ թվում՝ նաև ընտանեկան բռնության ենթարկվածների կամ ենթադրաբար ընտանեկան բռնության ենթարկվածների և

(կամ) նրանց խնամքի տակ գտնվող անձանց կողմից, ապաստարանի հասցեն կամ այլ տեղեկություն, որի միջոցով հնարավոր է հայտնաբերել դրա գտնվելու վայրը:

4. Անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն, իսկ դրա հետևանքով անձին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով:

## **ԳԼՈՒԽ 5. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐԸ**

### **Հոդված 23. Ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամարը**

1. Ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամարը բացվում է սույն օրենքով Լիազոր մարմնի կողմից՝ ընտանեկան բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամարի տնօրինման, դրանից ֆինանսական միջոցների տրամադրման հիմքերը և կարգը հաստատում է հայաստանի Հանրապետության կառավարությունը:

### **Հոդված 24. Ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամարի միջոցները**

1. Ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամարի միջոցները ձևավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի

հատկացումներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցներից:

## **ԳԼՈՒԽ 6. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

### **Հոդված 25. Ընտանեկան բռնության համար պատասխանատվությունը**

1.Սույն օրենքով սահմանված դեպքերում ընտանեկան բռնություն կատարած, ընտանեկան բռնությունից պաշտպանության միջոցների պահանջները խախտած, ինչպես նաև սույն օրենքի այլ դրույթների պահանջները խախտած անձինք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ենթակա են քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվություն:

## **ԳԼՈՒԽ 7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ և ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Հոդված 26 Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը նշանակում է սույն օրենքով Լիազոր մարմին:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանվում է ընտանեկան բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը և աշխատակարգը:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում բացվում է ընտանեկան բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամարը:

4. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում սույն օրենքով Լիազոր մարմինը նախաձեռնում և համակարգում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, բացառությամբ առանց պետության մասնակցության իրավաբանական անձանց, կարողությունների հզորացումը՝ սույն օրենքով Աջակցության կենտրոններին վերապահվող գործառույթներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

5. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է ապաստարանի կանոնադրությունը, իսկ սույն օրենքով Լիազոր մարմինը հիմնադրում է ապաստարաներ, ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների հետ կնքում է ապաստարան հիմնադրելու և ապաստարանների գործունեության աջակցության մասին պայմանագրեր:

### **Հոդված 27. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: